

կան³, յանուանեալն Աշտիշատ. եւ անդ կազմեալ զհանգստարանսն⁴ սրբոյն՝ պատեցին զպարկեշտ մարմինն արդարոյն ըստ արժանի կայանից⁵ ճշմարտին: 8 Ուր եւ⁶ շինեալ եկեղեցի մեծապայծառ եւ վկայարան սրբոց⁷՝ զարդարեցին պատուական եւ մեծագին սպասուք. հիմնացուցեալ կանգնեցին ի տեղուոջ վասն բազմութեան⁸ պաշտաւնեից, կարգեալ դարման⁹ անպակաս պտղոց ի հանգիստ առաւելեալ եղբայրութեանն. ժողովս տարեւորականս աշխարհայորդոր բազմութեամբ հաստատեցին ի տեղուոջն, որ ըստ ժամանակի բազմամբոյն ժողովրդաւ կամաւոր յաւժարութեամբ ազատք եւ քահանայք գաւառին, այլ եւ կարի յոյժ ի հեռաւոր¹⁰ տեղեաց դիմեալք յաւրկարգադրութեան նորա կատարեն¹¹: 9 Ուր եւ բազում աւգնականութիւնս առողջութեան ըստ իւրաքանչիւր ախտից շահեին¹² ի նշխարաց սրբոյն եւ ուրախալից¹³ սրտիւ դառնային¹⁴ ի բնակութիւն իւրաքանչիւր¹⁵:

ԺԹ. Եւ յետ վեց ամսոյ կատարման նորին տարւոյ¹⁶ հանգստեան սրբոյն Սահակայ՝ վախճանեցաւ երանելին Մաշտոց¹⁷ ի Վաղարշապատ քաղաքի, զոր եւ Նոր քաղաք անուանեն, յերեքտասաներորդի աւուր ամսոյն մեհեկանի. զոր առեալ իշխանին Ամատունեաց Վահանայ ¹⁸զմարմին առաքինւոյն՝ տարաւ յիւր ի գեաւոյն, որ անուանեալ կոչի Աւշական: 2 Եւ յոյժ մեծարանաւք զդիր երանելւոյն կազմեալ՝ տաւն յիշատակի առնեն ամենափոյթ պատուով ամենայն բազմութիւնք ժողովրդոցն Այրարատոյ¹⁹:

3 Չորոյ զհետ յաջորդեաց զաթոռ հայրապետութեան աշխարհիս Հայոց, հրամանաւ երանելւոյն Մաշտոցի²⁰՝ սուրբն Յովսէփ, որ էր ի գաւառէն Վա-

1 ՁԱտ. բազմութեան

2 Ձ. գեաւոյն

3 ՏՏ. սեփական

4 ԲԳտ. հանգստարան

5 ՁԱտ. կայենից

6 ՁԱտ. որ եւ

7 ԲԳտ. վկայարան սրբոյն

8 Ձ. վասն բազմութեան

9 ԲԳտ. դարմանս

10 ԲԳտ. յոյժ հեռաւոր

11 ԲԳտ. նորա տօնեն

12 ԲԳտ. շահին

13 Ձ. ի նշխարաց սրբոցն ուրախալից

14 ԲԳտ. դառնան. «Յօր. դառնային» (ծկթ. ԲԳտ.)

15 ԲԳտ. ի բնակութիւնս իւրաքանչիւր

16 ՁԱտ. տարոյ

17 ԲԳտ. մաշթոց

18 Ձ. առն առաքինւոյն... ի գեաւոյն

19 Ձ. արայրատոյ

20 ՏՏ. այստեղ՝ մաշտոց